

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 28/2

4 հունիսի 2013թ.

Քննարկվեց <Ռ.Օ.Ս. ՕՅԼ> ՍՊԸ 13.03.2013 թ-ի վարչական բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ 15.04.2013 թ-ի թիվ 2121936 ստուգման ակտի դեմ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ պետի 19.03.2013 թ-ի թիվ 2214428 հանձնարարագրի <Ռ.Օ.Ս. ՕՅԼ> ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ 06.04.2013 թ-ի թիվ 2214428 արձանագրությունը (այսուհետ նաև արձանագրություն), որում մասնավորապես նշված է.

ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ հարկային տեսուչներ՝ Հակոբ Հակոբյանս և Գագիկ Խաչատրյանս 06.04.2013 թ-ին ժամը 11:55-ին ք.Երևան, Դ.Բելի <Ընտանեկան> ռեստորանի հարևանությամբ գործող <Ռ.Օ.Ս. ՕՅԼ> ՍՊԸ-ին պատկանող վառելիքի մանրածախ առևտրի կետից կատարեցին հսկիչ գնում 6000 դրամ արժողությամբ (12 լ. բենզին), որի դիմաց վճարված կանխիկ գումարը չմուտքագրվեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրեց: Մեր կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև ժամը 11:09-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց <Z> հաշվետվություն, որում հասույթը կազմում էր 8500 դրամ և մեր պահանջով չմուտքագրված գումարը՝ 6000 դրամը, ժամը 11:10-ին մուտքագրվեց ՀԴՄ: Ժամը 11:10-ին նորից դուրս բերվեց <Z> հաշվետվությունը՝ գումարով 6000 դրամ գումարով: Ուսումնասիրությամբ պարզվեց, որ <Ռ.Օ.Ս. ՕՅԼ> ՍՊԸ-ն խախտել է ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշման 19-րդ կետի <բ> ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն <<հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Հիմք ընդունելով վերոգրյալը Էրեբունու ՀՏ պետի կողմից 10.04.2013 թ-ին հրապարակվել է թիվ 2121936 հանձնարարագիրը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում կատարելու վերաբերյալ: Կատարված ստուգման արդյունքում կազմվել է Էրեբունու ՀՏ 15.04.2013 թ-ի թիվ 2121936 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի պահանջները խախտելու համար կիրառվել է <<հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տուգանքը՝ գումարով 150.000 դրամ:

<Ռ.Օ.Ս. ՕՅԼ> ՍՊԸ վարչական բողոքում մասնավորապես նշված է.

ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ տեսուչները <Ռ.Օ.Ս. ՕՅԼ> ՍՊԸ-ում իբր հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում են կատարել և 2013 թ-ի ապրիլի 15-ին կազմել թիվ 2121936 ակտը, որով <Ռ.Օ.Ս. ՕՅԼ> ՍՊԸ-ին <<հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով առաջադրվել է տուգանք 150.000 դրամի չափով:

Մինչդեռ <Ռ.Օ.Ս. ՕՅԼ> ՍՊԸ-ին լրացուցիչ տուգանք առաջադրելը հիմնազուրկ է, իսկ ստուգման ակտը ոչ իրավաչափ, քանի որ օրենքով սահմանված կարգով ընկերությունում համապատասխան ստուգում չի իրականացվել: Բացի այդ, ընկերության կողմից չեն խախտվել <<հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջները:

Այսպիսով, <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 63 հոդվածը սահմանում է, որ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ:

Մատնանշված հանգամանքների հիմքով և <<Հարկերի մասին> ՀՀ օրենքի 36-րդ, <Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի 11-րդ և <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 76-րդ ու 77-րդ հոդվածների կարգով՝ Ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ էրեբունու հարկային տեսչության 15.04.2013 թ-ի թիվ 2121936 ակտը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ ստուգման ակտը կազմվել է ՀՀ գործող օրենսդրության պահանջների խախտմամբ:

ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Ակտի նախագիծը ստուգում իրականացնող անձը 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ առարկություններ ներկայացնելու նպատակով: Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է ակտի նախագիծը: Սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից առարկություններ չներկայացվելու դեպքում ստուգող մարմինը կազմում է ակտը և դրա մեկ օրինակը՝ ստորագրված ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից, ժամկետի ավարտից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին»:

Քննարկվող դեպքում և ստուգման ակտի նախագիծը կազմվել է և ընկերությանն է ուղարկվել 10.04.2013 թ-ին, իսկ ստուգման ակտը կազմվել է 15.04.2013 թ-ին: Այսինքն, ստուգման ակտը կազմվել է ակտի նախագիծը կազմելուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրը (2013 թ-ի ապրիլի 13-ը և 14-ը եղել են ոչ աշխատանքային), որի հետևանքով խախտվել է ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Ստուգման ակտի ուսումնասիրությամբ պարզվեց նաև, որ այն կնքված չէ վարչական մարմնի (էրեբունու ՀՏ) պաշտոնական կնիքով: Այսինքն, քննարկվող դեպքում խախտվել են <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի <ժ> կետի պահանջները, որի համաձայն վարչական ակտը պետք է պարունակի ակտն ընդունած վարչական մարմնի պաշտոնական կնիքը:


Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի <ա> կետի դրույթներով, որի համաձայն անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով, Հանձնաժողովը գտնում է, որ ընկերության բողոքը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ էրեբունու ՀՏ 15.04.2013 թ-ի թիվ 2121936 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ